ԾՐԱԳԻՐ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻԻ ԱՆՎԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամը, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով գիտության և տեխնոլոգիաների կարևորությունն ազգային տնտեսությունների զարգացման գործում,

ցանկանալով ամրապնդել և զարգացնել գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցությունը՝ համաձայն ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի միջև 2022 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված Փոխըմբռնման հուշագրի դրույթների (այսուհետ՝ Հուշագիր),

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1
Նախաբան

Կողմերը կաջակցեն Հայաստանի և Վրաստանի գիտահետազոտական կազմակերպությունների, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցությանը՝ համաձայն սույն Ծրագրի դրույթների և յուրաքանչյուր երկրում գործող օրենսդրության ու կանոնակարգերի:

Հոդված 2

Համագործակցության ձևեր

Համագործակցությունը կիրականացվի հետևյալ ձևերով.

2.1. համատեղ հետազոտական և մշակումների նախագծերի իրականացում, ներառյալ հետազոտության արդյունքների, գիտնականների ու մասնագետների փոխանակում,

2.2. համագործակցություն ԵՄ ծրագրերի շրջանակում՝ մասնավորապես «Հորիզոն Եվրոպա» և «Էրազմուս +»,

2.3. գիտատեխնոլոգիական համագործակցության փոխհամաձայնեցված այլ ձևեր, ներառյալ միջազգային գիտատեխնոլոգիական ծրագրերին համատեղ մասնակցությունը:

Հոդված 3

Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներ

Հաշվի առնելով երկու երկրների գերակա խնդիրները՝ Կողմերը կզարգացնեն համագործակցությունը ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հետևյալ ոլորտներում.

ա) բնական գիտություններ,

բ) ճարտարագիտություն և տեխնոլոգիա,

գ) բժշկական գիտություններ,

դ) գյուղատնտեսական գիտություններ,

ե) հասարակական և հումանիտար գիտություններ (հատկապես հայագիտության և վրացագիտության):

Փոխադարձ գրավոր համաձայնությամբ կարող են ներառվել հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներ:

Հոդված 4

Համատեղ հետազոտական և մշակումների ծրագրեր

Համաձայն Հուշագրի Հոդված 2-ով սահմանված դրույթների՝ համատեղ հետազոտական և մշակումների ծրագրերը կիրականացվեն հետևյալ ձևերով՝

4.1. Կողմերը միաժամանակ կհայտարարեն գիտական նախագծերի աջակցության մրցույթ 2 տարին մեկ անգամ:

4.2. Նախագիծը պետք է ներառի նախատեսվող համատեղ հետազոտական աշխատանքի խնդիրների և հիմնավորման, ինչպես նաև մեթոդաբանության, յուրաքանչյուր հետազոտական թիմի կազմի և նախատեսված օրացուցային պլանի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

4.3. Անգլերեն նախագիծը, լրացված համաձայն «Համատեղ հետազոտական և զարգացման նախագծերի հայտի ձև»-ի (Հավելված), պետք է գնահատման և հաստատման ներկայացվի միաժամանակ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամ: Յուրաքանչյուր Կողմ կգնահատի և կհաստատի նախագծերը՝ առաջնորդվելով իր կողմից սահմանված կանոնների և կանոնակարգերի, և միայն այն նախագծերը, որոնք հաստատվել են երկու Կողմերի կողմից կստանան դրամաշնորհ: Համատեղ հետազոտական նախագծերի կատարման ժամկետը երկու տարի է: Նախագծի շրջանակում յուրաքանչյուր ուղղությամբ այցելությունների ընդհանուր տևողությունը չպետք է լինի տարեկան երկու ամսից ավելի:

4.4. Յուրաքանչյուր Կողմ ինքն է սահմանում գիտական այցելությունների հաշվետվությունների ներկայացման կարգը:

4.5. Համատեղ հետազոտությունների և մշակումների նախագծերի վերաբերյալ հաշվետվությունը պետք է կատարվի՝ համաձայն Կողմերի ներքին կանոնների և կանոնակարգերի: Նախագծերի կատարման ժամկետի ավարտից հետո երկու ամսվա ընթացքում ամփոփիչ հաշվետվությունը, որը ներկայացնում է կատարված աշխատանքը և ստացված արդյունքները, կպատրաստվի անգլերենով երկու հետազոտական խմբերի կողմից և կներկայացվի համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամ:

4.6. Համատեղ հետազոտությունների և մշակումների նախագծերի ֆինանսավորումը կներառի փոխանակման և հետազոտության ծախսերը: Ֆինանսավորումը կիրականացվի՝ համաձայն Կողմերի ներքին կանոնների և կանոնակարգերի: Խմբերի հավասարաչափ ֆինանսավորումը ցանկալի է, բայց ոչ պարտադիր:

Հոդված 5

Ֆինանսական աջակցություն

5.1. Յուրաքանչյուր Կողմի բյուջետային հնարավորություններով պայմանավորված՝ կորոշվի ֆինանսավորման երաշխավորվող նախագծերի թիվը:

5.2. Հաստատված համատեղ հետազոտական նախագծերի ֆինանսավորման սկզբունքը.

Յուրաքանչյուր նախագծի տարեկան բյուջեն կազմում է մինչև 5000 ԱՄՆ դոլար (համարժեք ՀՀ դրամ և վրացական լարի) յուրաքանչյուր նախագծի համար:

5.3. Մասնակիցների միջազգային և ներքին ճանապարհածախսը, կեցության և օրապահիկի ծախսերը հոգում է ուղարկող Կողմը:

Հոդված 6

Ստացված տեղեկատվության տարածում

6.1. Գիտատեխնոլոգիական արդյունքները և սույն Ծրագրի շրջանակում իրականացվող համագործակցություններից ստացված ցանկացած այլ տեղեկություն կտարածվի, կհայտարարվի, կիրապարակվի կամ կառևտրայնացվի համագործակցող կողմերի գրավոր համաձայնությամբ և մտավոր սեփականության իրավունքներին վերաբերող միջազգային համաձայնագրերին համապատասխան, որոնց երկու Կողմերը հանդիսանում են կողմ:

6.2. Կողմերի գրավոր համաձայնությամբ երրորդ երկրների հաստատություններից կամ միջազգային կազմակերպություններից գիտնականներ և մասնագետներ կարող են հրավիրվել մասնակցելու սույն Ծրագրի շրջանակում իրականացվող նախագծերին և ծրագրերին: Նման մասնակցության ծախսերը սովորաբար կրում են երրորդ երկրները, եթե Կողմերը գրավոր այլ կերպ չեն պայմանավորվում:

Հոդված 7

Ծրագրի իրականացում և իրավական հարցեր

7.1. Սույն Ծրագիրը կնքվել է Կողմերի միջև համագործակցությունն ընդլայնելու և զարգացնելու նպատակով և, միջազգային իրավունքի համաձայն, չի հանդիսանում Կողմերի պետությունների համար պարտադիր ուժ ունեցող համաձայնագիր: Սույն Ծրագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել կամ կիրառվել որպես Կողմերի պետությունների համար օրինական իրավունքներ կամ պարտավորություններ առաջացնող դրույթներ:

7.2. Սույն Ծրագրի մեկնաբանման կամ իրականացման հետ կապված ցանկացած վեճ կլուծվի Կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով:

7.3. Յուրաքանչյուր Կողմ, իր օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները սույն Նախագծի շրջանակում համագործակցային գործունեության իրականացման հնարավոր լավագույն պայմաններն ապահովելու համար:

7.4. Սույն Ծրագիրը չի ազդի Կողմերից որևէ մեկի կողմից կնքված այլ միջազգային պայմանագրերից կամ համաձայնագրերից բխող որևէ պարտավորության վավերականության կամ կատարման վրա:

7.5. Սույն Ծրագիրը կարող է փոփոխվել ցանկացած ժամանակ Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 8

Ծրագրի սկիզբը և ավարտը

8.1. Սույն Ծրագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու օրվանից:

8.2. Սույն Ծրագիրն ուժի մեջ կմնա հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա հինգ տարիների համար, եթե Կողմերից որևէ մեկը գրավոր չի ծանուցում սույն Ծրագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

8.3. Դադարեցումն ուժի մեջ կմտնի գրավոր ծանուցումն ստանալու օրվանից վեց ամիս անց: Սույն Ծրագրի դադարեցումը չի ազդի սույն Ծրագրի շրջանակում

իրականացվող և սույն Ծրագրի դադարեցման պահին ամբողջությամբ չկատարված նախագծերի կամ ծրագրերի վրա:

Ստորագրված է 7-ը հունիսի 2023 թվականին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, վրացերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն ծրագրի մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում՝ նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կողմից՝	**Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի կողմից՝**
Սարգիս Հայոցյան	**Էրեկլե Աստախիշվիլի**

Հավելված

ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե	ՄՐՑՈՒՅԹ - 2023 ՆԱԽԱԳԻԾ	Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամ

Հայտի վերնագիրը	
Հետազոտության բնագավառը	
Բնույթը և տեսակը • հիմնարար • կիրառական • տեսական • փորձարարական	
Բանալի բառեր	
Խմբի ղեկավար Անուն Ազգանուն Հայրանուն	Խմբի համաղեկավար Անուն Ազգանուն Հայրանուն
Կազմակերպություն	Կազմակերպություն
Խմբի անդամների թիվը	Խմբի անդամների թիվը
Աշխատանքի վարձատրությունը	
Վերադիր ծախսեր	
Հայցվող ընդհանուր գումար	
Խմբի ղեկավարի ստորագրությունը	
Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը	

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. ***Անոտացիա***

2. ***Խնդրի արդի վիճակի վերլուծությունը***

3. ***Նախագծի գիտական նպատակները և խնդիրները***

4. ***Հետազոտական ծրագիրը***

5. ***Իրականացման եղանակները և գիտական մեթոդները***

6. ***Օրացուցային պլանը***

7. ***Տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները***

8. ***Խմբերի համագործակցության ներկա վիճակը և ակնկալվող արդյունքները***

9. ***Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները***

(հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

10. ***Օգտագործված գրականության ցանկը***

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Անուն, ազգանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
Հրապարակված	գիտական հոդվածներ (*քանակը*)
	մենագրություններ (*քանակը*)
2018-2023 թվականներին հրապարակված գիտական հոդվածները (հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր) (10-ից ոչ ավելի)	1)
	2)
	3)
	4)
	5)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
Ստացված օտարերկրյա դրամաշնորհները	1)
	2)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

_____

(խմբի ղեկավարի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՄԲԻ ՀԱՄԱՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Անուն, ազգանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
Հրապարակված	գիտական հոդվածներ (*քանակը*)
	մենագրություններ (*քանակը*)
2018-2023 թվականներին հրապարակված գիտական հոդվածները (հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր) (10-ից ոչ ավելի)	1)
	2)
	3)
	4)
	5)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
Ստացված օտարերկրյա դրամաշնորհները	1)
	2)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

_____

(խմբի համաղեկավարի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

Անուն, ազգանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Որակավորումը (*դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
2018-2023 թվականներին հրապարակված գիտական հոդվածները (հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր) (10-ից ոչ ավելի)	1)
	2)
	3)
	4)
	5)

_____

(կատարողի ստորագրությունը)

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ծածկագիր՝

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (*ներառյալ եկամտային հարկը*)						
ազգանուն, անուն, հայրանուն	2024թ.			2025թ.		
	ամսական գումար	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական գումար	ամիսների քանակ	պահանջվող գումար
1)		*12*			*12*	
2)		*12*			*12*	
3)		*12*			*12*	
4)		*12*			*12*	
Ընդհանուր գումար						

2. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում (*բոլոր ծախսերը հիմնավորվել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ*)		
2.1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2024թ.	2025թ.
1)		
2)		
...		
Ընդհանուր գումար		
2.2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ	2024թ.	2025թ.
1)		
2)		
...		
Ընդհանուր գումար		
2.3. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ	2024թ.	2025թ.
Նախահաշվի մեկնաբանության (մինչև 500 բառ)		
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	2024թ.	2025թ.

Խմբի ղեկավար՝ _____ _____
(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____
(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)